

Տինանսական հաշվետվություններ

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն»
ՓԲԸ

31 դեկտեմբերի 2017թ.



Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, ք.Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964

Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964

F + 374 10 260 961

«Հայաստանի Հանրապետության Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին»

Ձևափոխված կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը

Մեր կարծիքով, բացառությամբ «Կարծիքի ձևափոխման հիմքեր» պարագրաֆում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն թվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Գոյություն ունեն հայտանիշներ, որ փոխհատուցելի ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) փոխհատուցման գումարը կարող է փոքր լինել վերջինիս 270,000 հազար դրամ և 401,453 հազար դրամ գումարով հաշվեկշռային արժեքներից՝ համապատասխանաբար 2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Պատճառն այն է, որ չի ակնկալվում, որ Ընկերության գործունեության արդյունքում կգոյանա բավարար վճարվելիք ԱԱՀ՝ փոխհատուցելի ԱԱՀ-ի հետ հաշվանցելու համար, և չկան նշված գումարները փոխհատուցելու այլ մեխանիզմներ: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» համաձայն՝ նման հայտանիշների առկայության դեպքում ղեկավարությունը պետք է գնահատի փոխհատուցվող գումարները: Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացրել է նման գնահատում՝ արժեզրկելով ավելացված արժեքի հարկը 48,238 հազար դրամով (բացահայտված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 6-ում):

Մենք չկարողացանք ձեռք բերել բավարար աուդիտորական ապացույցներ, թե արդյոք պետական բյուջեից ավելացված արժեքի հարկի գծով դեբիտորական պարտքի մնացորդային արժեքն ամբողջովին վերականգնելի է:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (<ՄԴ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություն 28-ի վրա, որտեղ ներկայացված է, որ Ընկերությունը վերաներկայացրել է 2018թ. ապրիլի 25-ին հաստատված ֆինանսական հաշվետվությունները, որի առնչությամբ նույն ամսաթվին մենք արտահայտել էինք ձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան ղեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:


ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:


Գագիկ Գյուլբուդադյան

Տնօրեն



Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու



25 մայիսի 2018թ.



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	3,308,134	3,184,494
Ոչ նյութական ակտիվներ	5	19,417	4,423
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	6	270,000	401,453
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար		9,113	5,701
		<u>3,606,664</u>	<u>3,596,071</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	4	-	238,028
Պաշարներ		9,123	3,757
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	47,249	14,978
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	2,671
Ժամկետային ավանդներ	8	30,000	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	9,181	284
		<u>95,553</u>	<u>259,718</u>
Ընդամենը ակտիվներ		<u>3,702,217</u>	<u>3,855,789</u>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ		2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	10		
Բաժնետիրական կապիտալ		1,466,508	391,915
Չգրանցված կապիտալ		-	1,074,593
Վերագնահատման պահուստ		946,908	1,052,052
Ընդհանուր պահուստ		63,702	63,702
Չբաշխված շահույթ		661,614	768,755
		<u>3,138,732</u>	<u>3,351,017</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ		-	75,102
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	254,790	218,162
Ակտիվներին վերաբերող շնորհ	12	182,564	128,967
		<u>437,354</u>	<u>422,231</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ		-	229
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	87,130	82,312
Ընթացիկ հարկային պարտավորություններ		39,001	-
		<u>126,131</u>	<u>82,541</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>3,702,217</u>	<u>3,855,789</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2018թ. մայիսի 25-ին՝

Մարկ Գրիգորյան

Սոֆյա Մալիյան

Գործադիր տնօրեն

Փոխգործադիր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2017թ.	2016թ.
		դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գովազդից հասույթ		36,124	36,380
Դրամաշնորհներից եկամուտ	14	804,207	807,418
Վարձակալությունից եկամուտ		32,514	25,241
Այլ եկամուտ	15	57,612	4,532
Հեռարձակման ծախսեր		(117,786)	(134,081)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(530,903)	(516,972)
Ռադիոհաղորդումների պատրաստում		(49,420)	(49,452)
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում		(104,393)	(289,485)
Այլ ծախսեր	16	(255,399)	(72,210)
Գործառնական գործունեությունից վնաս		(127,444)	(188,629)
Ֆինանսական եկամուտ	17	414	730
Ֆինանսական ծախսեր	17	(3,821)	(12,406)
Այլ ֆինանսական արդյունքներ	18	(164)	16
Վնաս մինչև հարկերը		(131,015)	(200,290)
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	19	(81,270)	35,668
Տարվա վնաս		(212,285)	(164,621)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(212,285)	(164,621)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Չգրանցված կապիտալ	Վերագնա- հատման պահուստ	Ընդհանուր պահուստ	Կուտակ- ված շահույթ	Ընդամենը
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	293,283	-	1,099,346	60,102	927,116	2,379,847
Տարվա վնաս	-	-	-	-	(164,622)	(164,622)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	(164,622)	(164,622)
Շահաբաժիններ	-	-	-	-	(37,407)	(37,407)
Բաժնետիրական կապիտալի համալրում	98,632	1,074,593	-	-	(26)	1,173,199
Գործարքներ սեփականատերերի հետ	98,632	1,074,593	-	-	(37,433)	1,135,792
Փոխանցում չբաշխված շահույթ	-	-	(47,294)	-	47,294	-
Պահուստային կապիտալի համալրում	-	-	-	3,600	(3,600)	-
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	391,915	1,074,593	1,052,052	63,702	768,755	3,351,017
Տարվա վնաս	-	-	-	-	(212,285)	(212,285)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	(212,285)	(212,285)
Բաժնետիրական կապիտալի համալրում	1,074,593	(1,074,593)	-	-	-	-
Գործարքներ սեփականատերերի հետ	1,074,593	(1,074,593)	-	-	-	-
Փոխանցում չբաշխված շահույթ	-	-	(105,144)	-	105,144	-
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,466,508	-	946,908	63,702	661,614	3,138,732

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(212,285)	(164,621)
<i>Ճշգրտումներ¹</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	104,393	93,659
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	(2,521)	(735)
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստ	-	138,822
Վաճառքի համար պահվող ակտիվների արժեզրկումից կորուստ	-	57,004
Տոկոսային ծախս	3,821	12,406
Ֆինանսական եկամուտ	(414)	(730)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	81,270	(35,668)
Դրամաշնորհներից եկամուտ	(804,207)	(807,418)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	164	(16)
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>(829,943)</u>	<u>(707,297)</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	99,011	(40,572)
Պաշարների փոփոխություն	(5,366)	384
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	4,814	19,528
Վաճառքի համար պահվող ակտիվների շարժ	238,028	-
Շնորհների ստացում	857,804	855,303
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<u>364,348</u>	<u>127,346</u>
Վճարված տոկոսներ	(3,821)	(2,297)
Վճարված շահութահարկ	(2,970)	(17,200)
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>357,732</u>	<u>107,849</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(248,808)	(150,875)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	4,890	824
Ստացված տոկոսային եկամուտ	414	730
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(243,504)</u>	<u>(149,321)</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	-	62,445
Վարկերի և փոխառությունների մարում	(75,331)	(55,000)
Վճարված շահաբաժիններ	-	(3,233)
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<u>(75,331)</u>	<u>4,212</u>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	38,897	(37,260)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	11	3
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում (տես՝ ծանոթագրություն 26)	284	37,541
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում (տես՝ ծանոթագրություն 26)	<u>39,181</u>	<u>284</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: